

## 21. Համերգային գործունեություն

2003թ. հանրապետությունում գործել են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի 16 և համայնքային ենթակայության 2 համերգային կազմակերպություններ:

2003թ. հանրապետությունում կազմակերպվել է 375 համերգ կամ 21-ով պակաս, քան 2002թ.: Կուլեկտիվների ուժերով կազմակերպվել է 155, իսկ այլ կուլեկտիվների հետ համատեղ (պայմանագրային հիմունքներով)՝ 220 համերգ: Հանրապետությունում կայացած համերգներից 4-ը կամ 1.1%-ը կազմակերպվել են գյուղական համայնքներում, 272-ը կամ 72.5%-ը՝ ֆիլիարմոնիկ համերգներն են:

2003թ. արտասահմանում կազմակերպված 13 համերգ-հյուրախաղերից 4-ական իրականացվել են ԱՄՆ-ում և Եվրոպայում, 3-ը՝ ԱՊՀ երկրներում և 2-ը՝ Կանադայում:

2003թ. կազմակերպվել է 154 բարեգործական համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 11.0 հազ. մարդ: Պատվերներով կազմակերպվել է 127 համերգ, հանդիսատեսների թվաքանակը կազմել է 125.8 հազ. մարդ, ստացված հասույթը՝ 254.9 հազ. դրամ:

Համերգային դահլիճներում կազմակերպված համերգներին ներկա է եղել 172.1 հազ. հանդիսատես: Նրանց 0.5%-ը կամ 0.8 հազ. մարդ հաճախել են գյուղական համայնքներում կազմակերպված համերգներին, 80.5%-ը կամ 138.6 հազ. մարդ՝ ֆիլիարմոնիկ համերգներին: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 54:

Համերգներից ստացված հասույթը կազմել է 13.6 մլն. դրամ (2002թ.՝ 50.4 մլն. դրամ), որից 9.9 մլն. դրամը ստացվել է ֆիլիարմոնիկ համերգներից, իսկ 0.1 մլն. դրամը՝ գյուղական համայնքներում կազմակերպված համերգներից: Միջին հաշվով մեկ համերգի մուտքի վճարումներից հասույթը կազմել է 36.3 հազ. դրամ, ընդ որում, գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 15.0 հազ. դրամ:

Համերգային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները կազմել են 381.5 մլն. դրամ, որի 67.7%-ը՝ ՀՀ պետական բյուջեից, 3.6%-ը՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից, 5.7%-ը՝ վարձակալությունից, 23.0%-ը՝ այլ եկամուտներից:

Համերգային կազմակերպությունների տարեկան ընդհանուր ծախսերը կազմել են 351.7 մլն. դրամ: Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումները կազմել են ընդհանուր ծախսերի 45.2%-ը, պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 17.3%-ը, ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 11.4%-ը, նյութական ծախսերը՝ 11.3%-ը, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը՝ 5.6%-ը, գործուղման ծախսերը՝ 3.8%-ը, այլ ծախսերը՝ 5.4%-ը: Միջին հաշվով մեկ համերգի ֆինանսական ծախսերը 2003թ. կազմել են 937.9 հազ. դրամ:

### Համերգային կազմակերպությունների գործունեությունն ըստ մարզերի, 2003թ.

	Համերգային կազմակերպությունների քանակը, միավոր	Համերգների քանակը, միավոր	Համերգների քանակը մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.երևան	16	356	22	168.5	473	13264.2	37.3
Շիրակ	2	19	10	3.6	189	300.0	15.8
Ընդամենը ՀՀ	18	375	21	172.1	459	13564.2	36.2

**Համերգային կազմակերպությունների գործունեությունը, 1996-2003թթ.**

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Համերգների քանակը միավոր,	Համերգների քանակը մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
1996	16	487	30	149.4	307	33256.0	68.3
1997	20	510	26	870.7	1707	42601.7	83.5
1998	21	579	28	952.6	1645	47650.1	82.3
1999	20	565	28	505.9	895	35089.6	62.1
2000	20	410	21	139.9	341	26710.0	65.1
2001	19	413	22	168.2	407	61322.0	148.5
2002	18	396	22	84.2	213	50385.7	127.2
2003	18	375	21	172.1	459	13564.2	36.3